ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԸ. ՊԱՏՃԱ՞Ռ, ԹԵ՞ԱՌԻԹ

Հիմնաբառեր. *COVID-19 ճգնաժամ, համավարակ, համաշխարհային տնտեսություն, գլոբալ անհաշվեկշռվածություն, համաշխարհային պարտք*

Դավիթ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1995 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Էկոնոմիկայի պետական կարգավորում» մասնագիտությամբ, 1998 թ.՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի ասպիրանտուրան: 1999 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2013 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2016 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999-2001 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2019 թ. նշանակվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն: Դասախոսում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Հեղինակ է 15 մենագրության և ավելի քան 70 գիտական հոդվածների ու զեկույցների:

Հոդվածում հեղինակն անդրադառնում է COVID-19 ճգնաժամին՝ հիմնավորելով, որ համավարակը ոչ թե ճգնաժամի պատճառ է, այլ առիթ: Որպես ճգնաժամի առավել խորքային պատճառներ՝ նա մատնանշում է, մասնավորապես, համաշխարհային պարտքի աննախադեպ աճի, համաշխարհային տնտեսության գլոբալ անհաշվեկշռվածության, ֆոնդային շուկաների կրիտիկական վիճակի և այլ գործոններ: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա, նրա կարծիքով, այստեղ ստեղծված ծայրահեղ վիճակը ստիպում է մտածել բացառապես վնասները նվազագույնի հասցնելու, հումանիտար աղետից խուսափելու, կորոնավիրուսի համապետական տարածումը կանխարգելելու և զոհերի թիվը հնարավորինս կրճատելու, այլ ոչ թե ճգնաժամը որպես հնարավորություն օգտագործելու ուղղությամբ:

Ակնհայտ է, որ աշխարհը համավարակի հետ կապված ճգնաժամի, դրա պատճառների, հետևանքների վերլուծությունների ու կանխատեսումների պակաս չի զգում: Ճգնաժամը, որպես երևույթ, գնահատվում և դրա հետևանքները կանխատեսվում են ամենատարբեր տեսանկյուններից՝ սկսած առողջապահականից, վերջացրած աշխարհաքաղաքականով:

Ներկա պահին համավարակի վերաբերյալ արմատավորված կարծիքները կարող ենք բաժանել երկու խոշոր խմբի՝ առաջինում ներառելով «պետականամետ» և, այսպես կոչված, ձախ տնտեսագետ-սոցիոլոգների, իսկ երկրորդում՝ ազատական տնտեսագետների տեսակետները:

Հատկանշական է, որ նրանց միջև առկա տարաձայնությունների մեծ մասը վերաբերում է ոչ թե խնդրի լուծման մոդելներին ու կառուցակարգերին, այլ համավարակի պատճառներին[1]:

Այդուհանդերձ, տեսակետների այդ բազմազանության մեջ մասնագետները համարյա թե միակարծիք են հետևյալ հարցում. COVID-19 տնտեսական ճգնաժամն աննախադեպ է, քանի որ այն հարվածեց երկրների տնտեսություններին (հատկապես՝ խոշոր) գրեթե միաժամանակ: Համավարակի կանխարգելման միջոցառումների հետևանքով լայն տարածում գտան տնտեսական ցնցումները՝ միանգամից կաթվածահար անելով տնտեսության շատ ոլորտներ: Ընդ որում, COVID-19 ոչ վարկային, ոչ բանկային կամ հանկարծակի դադարի, ոչ էլ արժութային ճգնաժամ է: Դա մի տնտեսական ճգնաժամ է, որ ներառում է բոլոր այդ ճգնաժամերի տարրերը, ինչպես նաև հանդես է գալիս որպես միմյանց վրա փոխազդող առաջարկի և պահանջարկի ցնցումների բարդ համակցություն[2]:

Այսպիսով՝ ի՞նչ է սպասվում աշխարհին: Իսկապես, համաշխարհային տնտեսական զարգացումների նկատմամբ սպասումները բավական մտահոգիչ են: COVID-19-ի բացասական ազդեցությունն արդեն իսկ դրսևորվել է ֆինանսական և հումքային շուկաներում: Երկրները փակել են սահմանները, նվազել են առևտրաշրջանառությունը և թողարկման ծավալները, և եթե տարեսկզբին 2020 թվականի համար կանխատեսվում էր 2,8 տոկոս համախառն աճ, ապա այսօր արդեն այս կանխատեսումը շրջվել է գլխիվայր, և անկումն անխուսափելի է[3]:

ՄԱԿ-ը հրապարակել է զեկույց 2020 թվականի առաջին կիսամյակի դրությամբ համաշխարհային տնտեսության վիճակի վերաբերյալ՝ ներառելով նաև կանխատեսում մինչև 2021 թվականը: Փորձագետների կարծիքով, ընթացիկ տարում նախանշվում է 3.2% անկում: Ընդ որում, նշվում է, որ COVID-19 համավարակի պատճառով հետագա երկու տարիներին աշխարհը կկորցնի շուրջ 8.5 տրլն ԱՄՆ դոլար եկամուտ, որը 1930-ական թթ. Մեծ ճգնաժամից հետո ամենակտրուկ անկումն է: Սակայն, միաժամանակ, ասվում է, որ նման ռեցեսիայի ծանր հետևանքները կարելի է հաղթահարել՝ իրավամբ նոր մակարդակի բարձրացնելով միջազգային համագործակցությունը: Համաձայն ՄԱԿ-ի զեկույցի՝ զարգացած երկրներին սպասվում է բացասական տնտեսական աճ, ինչի հետևանքով վերջիններիս ՀՆԱ-ն կկրճատվի 5%-ով: Այդ կորուստները մասամբ կփոխհատուցվեն միայն 2021 թվականին, երբ տնտեսությունը կարձանագրի չափավոր՝ 3,4% տնտեսական աճ: Ինչ վերաբերում է զարգացող երկրներին, ապա այստեղ ընթացիկ տարում կանխատեսվում է տնտեսության՝ միջինում 0.7% անկում, այնինչ համաշխարհային առևտրի ոլորտում դա կկազմի շուրջ 15%՝ պայմանավորված համաշխարհային պահանջարկի կտրուկ նվազմամբ և գլոբալ արժեշղթաներում տեղի ունեցող խզումներով: Համավարակը, հավանաբար, կհանգեցնի նրան, որ աղքատության գծից ներքև կհայտնվի ավելի քան 34 մլն մարդ, ընդ որում, այս հավելաճի ավելի քան կեսը բաժին կընկնի աֆրիկյան երկրներին: Իսկ երկարաժամկետ կանխատեսումները ցույց են տալիս, որ 2030 թվականին ծայրահեղ աղքատ ապրողների քանակը կաճի ևս 130 մլն-ով:

Համավարակը հատկապես ուժեղ «հարվածեց» ցածր վարձատրվող, հատուկ հմտություններ չպահանջող աշխատանք կատարող անձանց, այն դեպքում, երբ բարձր որակավորված աշխատողները տուժեցին

[1] Петровский П., Коронавирус – не причина, а катализатор экономического кризиса, 18 мая, 2020, http://russkie.org/articles/koronavirus-ne-prichina-a-katalizator-ekonomicheskogo-krizisa/

[2] Խ. Սողոմոնյան, COVID-19 տնտեսական ճգնաժամի գործունեության մեխանիզմը, 2020-05-15, https://www.hamakarg.am/?p=4048

[3] Հ. Բեջանյան, Պայքար համավարակի դեմ. դեպի տնտեսական ճգնաժամ, թե՞ ճգնաժամի կանխարգելում, «Ամբերդ» տեղեկագիր 2020, N1 (2), 15 17-24, https://asue.am/upload/files/amberd/Amberd%202020.1.pdf

ավելի քիչ: Ուստի այս հանգամանքն անկատ չի անցնի, և աշխարհում էապես կմեծանա աղքատների և հարուստների եկամուտների միջև առկա խզումն ինչպես մարդկանց, այնպես էլ պետությունների մակարդակով[4]:

Ինչպես կարծում է Համաշխարհային բանկի ղեկավար Դ. Մալպասը, համավարակի պատճառով համաշխարհային տնտեսության անկումը կհանգեցնի նրան, որ շուրջ 60 մլն մարդ կհայտնվի ծայրահեղ աղքատության մեջ, իսկ մինչ այդ Oxfam-ի (Աղքատության դեմ պայքարի կազմակերպություն) փորձագետները զգուշացնում էին ավելի քան 500 մլն մարդու՝ աղքատության մեջ հայտնվելու ռիսկի մասին[5]:

ՄԱԿ-ի փորձագետների պնդմամբ, COVID-19-ի պատճառով իր աշխատանքը կկորցնի ավելի քան 195 մլն մարդ, իսկ գործազրկության և աղքատության մակարդակը կհասնի իր «պատմական» շեմին: Ճգնաժամի հետևանքով առավել մեծ կորուստներ կկրեն փոքր և միջին ձեռնարկատիրությունը, գյուղատնտեսությունը, ինքնազբաղված անձինք և աշխատանքային միգրանտները[6]:

Ելնելով վերոնշյալից, համաշխարհային պարտքային ճգնաժամի հետևանքները մեղմելու նպատակով, 20-ից ավելի երկրների 300 օրենսդիր դիմել է ԱՄՀ՝ կոչ անելով դուրս գրել աղքատ երկրների պարտքերը[7]:

Հաջորդ դիտարկումը, որ ուզում ենք մեջբերել, հրապարակվել է Euromonitor վերլուծական կենտրոնի՝ «Կորոնավիրուսի ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա» խորագրով զեկույցում: Այստեղ նշվում է, որ, ընդհանուր առմամբ, աշխարհում կորոնավիրուսով կվարակվի բնակչության 1-10%-ը (ներառյալ համապատասխան թեստավորում չանցած, անախտանիշ (ասիմպտոմ) վարակակիրները): Ըստ հետազոտողների հաշվարկների՝ կորոնավիրուսից մահացության եզրափակիչ ցուցանիշը համաշխարհային մասշտաբով չի գերազանցի 0.8%-ը:

Հետազոտողները դիտարկում են նաև առավել հոռետեսական սցենար (խոր ռեցեսիա)՝ ըստ որի կվարակվի աշխարհի բնակչության մինչև 15%-ը, համավարակն անկում չի ապրի մինչև հուլիսի վերջ, իսկ մահացությունը միջինում կաճի մինչև 1%: Այս դեպքում կարելի է ակնկալել ընկերությունների սնանկացումների պատկառելի «շքերթ», որը կանխարգելելու համար անհրաժեշտ կլինի նախաձեռնել պետական լայնածավալ հակաճգնաժամային միջոցառումներ: Առավել կոշտ, սակայն քիչ հավանական սցենարները (առաջին՝ համավարակն ամռանը թուլանում է, սակայն «վերադառնում» սեպտեմբեր-հոկտեմբերին, երկրորդ՝ շարունակվում է մինչև գարուն՝ գագաթնակետին հասնելով աշնանը) ենթադրում են աշխարհի բնակչության մինչև 25-30%-ի վարակում, իսկ միջին մահացությունը՝ մինչև 2,5%: Սակայն, համաշխարհային տնտեսության վերականգնման առումով, ըստ բոլոր սցենարների, կանխատեսումը նույնն է. համաշխարհային տնտեսությունը կվերադառնա մինչճգնաժամային մակարդակին 2021 թվականի վերջին կամ 2022 թվականին[8]:

Փոքր-ինչ տարբերվում է ԱՄՀ տնօրեն-կարգադրիչի կարծիքը՝ ըստ որի համաշխարհային տնտեսությունը մինչճգնաժամային մակարդակին կհասնի 2023

---

[4] Коронавирус: в ООН поставили диагноз мировой экономике и назначили лечение, 15 мая, 2020, http://khovar.tj/rus/2020/05/koronavirus-v-oon-postavili-diagnoz-mirovoj-ekonomike-i-naznachili-lechenie/

[5] Всемирный банк предрек крайнюю бедность 60 млн человек из-за пандемии; 20 мая, 2020, https://www.interfax.ru/business/709392

[6] Влияние коронавируса COVID-19 на экономику, 2020/05/29, https://www.tadviser.ru/index.php/%D0%A1%D1%82%D0%B0%D1%82%D1%8C%D1%8F:%D0%92%D0%BB%D0%B8%D1%8F%D0%BD%D0%B8%D0%B5_%D0%BA%D0%BE%D1%80%D0%BE%D0%BD%D0%B0%D0%B2%D0%B8%D1%80%D1%83%D1%81%D0%B0_COVID-19_%D0%B-D%D0%B0_%D1%8D%D0%BA%D0%BE%D0%BD%D0%BE%D0%BC%D0%B8%D0%BA%D1%83

[7] МВФ: Пандемия COVID-19 нанесет серьезный урон экономике Кыргызстана, https://rus.azattyk.org/a/30611446.html

[8] Чернышевская Ю., Мировая экономика начнет восстановление с 2021 года, 29.04.2020, https://www.rzd-partner.ru/other/news/mirovaya-ekonomika-nachnet-vosstanovlenie-s-2021-goda/

թվականին[9]:

Ինչ վերաբերում է համաշխարհային տնտեսության հիմնական «խաղացողներին», ապա նախ՝ անդրադառնանք ԱՄՆ-ին, որտեղ, կախված համավարակի զարգացման դինամիկայից, կանխատեսվում է ՀՆԱ-ի կրճատում 3,3-7,4%-ի չափով: Միաժամանակ, ըստ ամենալավատեսական կանխատեսումների, տնտեսական ակտիվության մակարդակի վերականգնում ակնկալվում է ոչ շուտ, քան 2021 թվականի վերջին: Ընթացիկ տարվա չորրորդ եռամսյակում՝ համավարակի երկրորդ ալիքի բռնկման դեպքում, ԱՄՆ ՀՆԱ-ն կրկին կսկսի նվազել[10]:

ԵՄ պարագայում պետք է նշել, որ վերջինս այս պահի դրությամբ տուժել է ավելի շատ, քան մնացյալ աշխարհը: ԵՄ տնտեսությունը 2020 թվականի առաջին երեք ամիսներին կրճատվել է 3.5%-ով, և այդ տեմպերը շարունակվելու դեպքում տարեկան անկումը կկազմի 13%, իսկ կորուստները՝ 2 տրլն ԱՄՆ դոլար: Եվ սա այն դեպքում, երբ մոտավորապես նույնքան անհրաժեշտ կլինի ծախսել համավարակի և ճգնաժամի դեմ պայքարի շրջանակներում:

Հաջորդ կանխատեսումը պատկանում է Եվրոբանկին: Ըստ այդմ՝ եվրոգոտու (ներառում է ԵՄ անդամ 27 երկրից 19 երկիր) երկրներում անկումը կկազմի 12%: Ի դեպ, եվրոգոտուն բաժին է ընկնում ԵՄ տնտեսության մոտ 85%-ը կամ 14 տրլն եվրո կազմող ՀՆԱ 12 տրլն-ը: Շուրջ 450 մլն բնակչություն ունեցող ԵՄ-ին բաժին է ընկնում Covid-19-ի հետ կապված մահերի շուրջ կեսը:

ԱՄՆ ՀՆԱ-ն եռամսյակային կտրվածքով նվազել է 1.2%-ով՝ ԵՄ 3.5%-ի համեմատ: Եթե արտարկման (էքստրապոլյացիայի) միջոցով այս ցուցանիշը վերագրենք տարվան, ապա կտեսնենք, որ առաջին եռամսյակում ԵՄ տնտեսության անկման տեմպերը գնահատվում են 13%՝ ԱՄՆ 4,8%-ի համեմատությամբ: Ըստ ԱՄՀ գնահատականների՝ ԵՄ տնտեսության անկումը կկազմի 7%, ԱՄՆ-ինը՝ 6%, Ճապոնիայինը՝ 5%, այն դեպքում, երբ Չինաստանը կապահովի 1,2% աճ[11]:

Համեմատության համար նշենք, որ փորձագետների գնահատմամբ, կորոնավիրուսի հետևանքով Հայաստանի տնտեսությանը հասցված վնասն ըստ հիմնական սցենարի կկազմի 1,53 մլրդ ԱՄՆ դոլար (կամ 2019 թ. ՀՆԱ 11.2%–ը)[12]:

Համաձայն ԱՄՀ գնահատման՝ աշխարհի խոշորագույն երեք տնտեսությունները, որոնց բաժին է ընկնում համաշխարհային արտադրության և սպառման ավելի քան կեսը, արձանագրել են ժամանակակից պատմության ամենալուրջ անկումը:

Չինաստանի տնտեսական ակտիվությունն ավելի քան 50 տարվա ընթացքում առաջին անգամ կրճատվել է: Նույն կերպ, Եվրամիությունը նման անկում չի ունեցել իր գոյության ամբողջ ժամանակահատվածում, իսկ ԱՄՆ տնտեսությունը «սայթաքել» է պատմության մեջ առավել երկարատև՝ 10-ամյա վերելքից հետո:

Գործազրկությունն ԱՄՆ-ում գերազանցել է բոլոր ռեկորդները՝ Մեծ ճգնաժամի օրերից սկսած:

Համավարակն ընդհատեց համաշխարհային տնտեսության վերականգնումը 2008-2009 թթ. ճգնաժամից հետո, իսկ դրա ծավալներն այսօր նույնիսկ ծիծաղելի են թվում, համեմատած այն հետևանքների հետ, որոնք սպասվում են աշխարհին, այսպես կոչված, Մեծ կարանտինից հետո: Սա նշանակում է, որ հարստության

[9] Чтобы восстановиться после пандемии COVID-19, мировой экономике понадобится три года; 17.05.2020; https://inshe.tv/economics/2020-05-17/530742/

[10] Жуков С.В., Масленников А.О., Мировая экономика в ситуации пандемии коронавируса. Положение на 13 апреля 2020 г., https://www.imemo.ru/news/events/text/mirovaya-ekonomika-v-situatsii-pandemii-koronavirusa-polozhenie-na-13-aprelya-2020-g

[11] Калмыков А., Европа подсчитала убытки от коронавируса. Худшие прогнозы сбываются, Би-би-си, 1 мая 2020, https://www.bbc.com/russian/features-52493422

[12] Avanesyan V., Assessment of the Economic Impact of Restrictive Government Policies (Lockdowns) to Combat Coronavirus; 03.04.2020, http://inecbus.rau.am/rus/11/1226?fbclid=IwAR1ygZ_dY_vVnLDb5w-pUgr59bVdX-PouEQEZW6tfx4M2X_phe8JSmthLa1Q

բազմապատկման և անհավասարության կրճատման գործընթացները երկրագնդում կլինեն ավելի երկարատև:

Ինչպես հայտնի է, 2008 թ. ճգնաժամի ժամանակ աշխարհը սահմանափակվեց դրամավարկային քաղաքականության մեղմացմամբ՝ թողարկելով փողեր և, այդպիսով, հաղթահարելով ֆինանսական ճգնաժամը: Այս անգամ ամեն ինչ շատ ավելի լուրջ է, քանի որ խնդիրը ոչ թե կապիտալի անբավարարության, այլ կորոնավիրուսի և դրա հետ կապված սահմանափակումների մեջ է:

Տնտեսությունների վերականգնման նպատակով նախատեսվում է տրամադրել 9 տրլն ԱՄՆ դոլար, սակայն հասկանալի է, որ նման գումար պետությունները չունեն, հետևաբար՝ պետք է դիմեն պարտք վերցընելուն, որի վճարման բեռը բաժին կընկնի հաջորդ սերունդներին:

Եվ եթե զարգացած երկրներն առանց դժվարությունների կգտնեն պարտքի ներգրավման աղբյուրներ, ապա նույնը դժվար է հավաստել զարգացող երկրների համար:

Հայտնի է, որ արտակարգ պայմաններում կապիտալը «փախչում է» զարգացող շուկաներից՝ հանգեցնելով դևալվացիայի, ավելացնելով ինչպես հին, այնպես էլ նոր ներգրավված պարտքի արժեքը, դրանով իսկ բարձրացնելով բյուջեի վրա ճնշումը: Հետևաբար՝ համեմատաբար ոչ հարուստ զարգացող երկրները, ինչպես օրինակ՝ Ռուսաստանը, Հնդկաստանը կամ Մեքսիկան, կորոնավիրուսից կտուժեն ավելի շատ: Ընդ որում, ՄԱԿ-ն այս երկրներին կոչ է արել հավաքել 5.5 տրլն ԱՄՆ դոլար արժողությամբ հակաճգնաժամային փաթեթ, թեև, փորձագետների կարծիքով, դա նույնպես բավարար չէ[13]:

Ընդհանուր առմամբ, տպավորությունն այնպիսին է, որ արևմտյան երկրներին վախեցնում է ոչ այդքան կորոնավիրուսի փաստը, որքան վերջինիս չեզոքացմանն ուղղված միջոցները՝ մտահոգվելով «վարկային փուչիկի աղետալի պայթյունից»: Այդ իսկ պատճառով արևմտյան մամուլում ներկայիս ճգնաժամը ոչ միայն և ոչ այդքան համեմատվում է 1918 թվականի «Իսպանական ժանտախտի», որքան 2008 թվականի ճգնաժամի հետ:

Տեսականորեն, խոշոր և բազմազանեցված (դիվերսիֆիկացված) տնտեսությունները (օրինակ՝ ԱՄՆ-ի, Եվրամիության և Մեծ Բրիտանիայի) ի վիճակի են հաղթահարելու տնտեսական ակտիվության ժամանակավոր (2-3 ամիս տևողությամբ) անկման հետ կապված հիմնախնդիրները: Սակայն, կյանքը ցույց է տալիս, որ այդ աքսիոման «աշխատում էր» նախկինում, բայց ոչ հիմա: Բիզնես միջավայրի, բնակչության և բյուջեի ռեկորդային վարկահագեցվածության պայմաններում տնտեսական ակտիվության՝ նույնիսկ ոչ այդքան երկարատև կանգը կարող է հանգեցնել խուճապի և դեֆոլտների շղթայական ռեակցիայի՝ ամենաանկանխատեսելի տնտեսական հետևանքներով: Չինաստանն այս իրավիճակից դուրս եկավ համավարակի դեմ պայքարի ամենակոշտ միջոցների կիրառմամբ. հասկանալի է, որ երկիրն ամեն դեպքում տնտեսական վնաս կկրի, սակայն տնտեսական գահավիժում, որպես այդպիսին, չի դիտարկվի: Ընդ որում, արևմտյան երկրները Չինաստանին մեղադրում էին (են) կորոնավիրուսի դեմ պայքարում «ավտորիտար» մեթոդների օգտագործման մեջ՝ արձանագրելով, որ դրանք ընդունելի չեն «զարգացած ժողովրդավարության» պայմաններում: Սա, իհարկե, հասկանալի մոտեցում է, որը, միաժամանակ, ունի մեկ կարևոր բացասական կողմ. ԱՄՆ և ԵՄ տնտեսություններն ավելի խոցելի են, իսկ պետական ֆինանսները՝ շատ ավելի վատ վիճակում:

Խնդիրն ավելի է խորացնում այն հանգամանքը, որ ԱՄՆ-ում դժվար են պատկերացնում, թե «վարկային փուչիկի» որ բաղադրիչն է առավել խոցելի, քանի որ ամերիկյան պետական պարտատոմսերը համաշխարհային տնտեսության համար

[13] Калмыков А., Мировой экономике грозит кризис столетия, предупредил МВФ. Но все оказалось еще хуже, Би-би-си, 13 мая, 2020, https://www.bbc.com/russian/news-52642074

մշտապես համարվել են, այսպես կոչված, ոչ ռիսկային ակտիվ, և, համապատասխանաբար, գլոբալ տնտեսական ցնցումների ժամանակ դրանց թողարկումների միջոցով հնարավոր է դարձել ֆինանսական ներարկումների խնդրի լուծումը: Թեև ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը հայտարարել է 5 տրլն ԱՄՆ դոլարի ներարկման մասին, այս անգամ, կարծես թե, դիտարկվում է ԱՄՆ գլխավոր ակտիվի գնորդների պակաս, ինչը կարող է համակարգային խնդիրներ ստեղծել բյուջեի պակասուրդի ֆինանսավորման և ֆոնդային շուկաների կայունության համար[14]:

Այդուհանդերձ, արդյո՞ք կորոնավիրուսը համարվում է համաշխարհային ճգնաժամի պատճառ: Չպետք է մոռանալ, որ դեռևս 2019 թվականի երկրորդ կեսին ԱՄՀ-ը, Համաշխարհային բանկը, JP Morgan Chase-ը, AKPA գործակալությունը կանխատեսում էին տնտեսական ճգնաժամ 2020 թվականի վերջին՝ ելնելով հետևյալ նախադրյալներից.

- ռեկորդային ծավալի համաշխարհային պարտք՝ 188 տրլն ԱՄՆ դոլար՝ 2019 թվականի վերջի դրությամբ, որը համաշխարհային ՀՆԱ 230 %-ն է,
- վերարտադրության գլոբալ անհաշվեկշռվածության աննախադեպ խորացում, որը հիմք էր ստեղծում առևտրային պատերազմների և հովանավորչության համար,
- ֆոնդային շուկաների կրիտիկական վիճակ:

Այս գործոններն ուղեկցվում էին Բրեքզիթի, պատժամիջոցների հակամարտության, ԱՄՆ նախագահական ընտրությունների, ինչպես նաև նավթային առևտրային պատերազմների քաղաքական ռիսկերով:

Հարց է առաջանում. իսկ կորոնավիրուսի դեմ պայքարին ուղղված գործողություններն ինչպե՞ս են ազդելու ինտեգրման և տնտեսական զարգացման վրա՝ նպաստելով գլոբալացման կանոնների վերաձևակերպմանը:

Առաջին հերթին, դա հովանավորչության ուժգնացումն է, արտադրական շղթաների խզումը, համաշխարհային առևտրի «սառեցումը». կորոնավիրուսի դեմ պայքարին անհրաժեշտ ապրանքների թողարկման անհրաժեշտությունը նախադրյալներ է ստեղծել այդ երկրների փաստացի և տնտեսական «փակման» համար:

Երկրորդ հերթին, միջազգային կորպորացիաների կողմից ճնշումը, ճգնաժամի «ներքո» պետությունների կողմից պարտքերի դուրսգրումը կամ վերակառուցումը:

Երրորդ հերթին, դա տնտեսական օգնությունն աշխարհաքաղաքական գերիշխանության սահմանման համար որպես գործիք օգտագործելու ռիսկն է: Ակնհայտ են ազդեցության ոլորտների նոր՝ աշխարհաքաղաքական վերաբաժանման փորձերը[15]:

Ակներև է, որ վերը բերված վերլուծությունը բացահայտում է, այսպես կոչված, COVID-19 ճգնաժամի «ծագումնաբանությունը», հիմնավորելով, որ համավարակը ճգնաժամի առաջացման ոչ թե պատճառ էր, այլ առիթ:

Ի վերջո, այս պատճառահետևանքային դիտարկումները մղելով երկրորդ պլան, անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցին. ի՞նչ անել: Միջազգային կազմակերպությունների հորդորներն ու մոտեցումները համագործակցության խորացման և խնդիրները միասնական ուժերով լուծելու վերաբերյալ, «չեն աշխատում»: Համաշխարհային տնտեսությունը «վերադառնում է ի շրջանս յուր», այն է՝ նեղ ազգային քաղաքականության, հովանավորչության, ազգային շահի գերակայության վիճակի:

Կարծում ենք՝ տեղին է համաշխարհային տնտեսության պարբերական զարգացման դրույթի հիշատակումը, սակայն այս պարագայում խոսքը վերաբերում է ոչ թե անկման կամ վերելքի հարափոխությանը, այլ գաղափարախոսական հենքին ու պե-

[14] Данилов И., Вирус отнимает у Запада руль от мировой экономики, 15.03.2020, https://ria.ru/20200315/1568608631.html

[15] Петровский П., Коронавирус – не причина, а катализатор экономического кризиса, 18 мая, 2020, http://russkie.org/articles/koronavirus-ne-prichina-a-katalizator-ekonomicheskogo-krizisa/

տական և ազգային շահերի վերաիմաստավորմանը:

Գաղտնիք չէ, որ տնտեսագիտության նույնիսկ ամենադասական մոտեցումներն առավել արդյունավետ կիրառվել են միայն իրենց հատուկ միջավայրում, և այսօր տնտեսական քաղաքականության վերանկալման, նոր օրենքների ու օրինաչափությունների ամրագրման անհրաժեշտությունն աներկբա է:

Անդրադառնալով մեր հանրապետությանը, պետք է նշել, որ բազմաթիվ հետազոտողների այն պնդումը, որ «ճգնաժամը նաև հնարավորություն է», ցավոք, չկենսագործվեց: Ավելին, երկրում ստեղծված կրիտիկական վիճակը ստիպում է բացառապես մտածել վնասները նվազագույնի հասցնելու, հումանիտար աղետից խուսափելու, կորոնավիրուսի համապետական տարածումը կանխարգելելու և զոհերի թիվը հնարավորինս կրճատելու ուղղությամբ:

Ճգնաժամի ավարտից հետո մեզ սպասվում է համաշխարհային տնտեսությունում և տարածաշրջանում վերադիրքավորվելու երկար ու դժվարին ճանապարհ...

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բեջանյան Հ., Պայքար համավարակի դեմ. դեպի տնտեսական ճգնաժամ, թե՞ ճգնաժամի կանխարգելում, «Ամբերդ» տեղեկագիր, 2020, N1 (2), 15 17-24, https://asue.am/upload/files/amberd/Amberd%202020.1.pdf
2. Սողոմոնյան Խ., COVID-19 տնտեսական ճգնաժամի գործունեության մեխանիզմը, 2020-05-15, https://www.hamakarg.am/?p=4048
3. Влияние коронавируса COVID-19 на экономику, 2020/05/29, https://www.tadviser.ru/index.php
4. Всемирный банк предрек крайнюю бедность 60 млн человек из-за пандемии; 20 мая 2020; https://www.interfax.ru/business/709392
5. Данилов И., Вирус отнимает у Запада руль от мировой экономики, 15.03.2020, https://ria.ru/20200315/1568608631.html
6. Жуков С., Масленников А., 14.04.2020, Мировая экономика в ситуации пандемии коронавируса. Положение на 13 апреля 2020 г., https://www.imemo.ru/news/events/text/mirovaya-ekonomika-v-situatsii-pandemii-koronavirusa-polozhenie-na-13-aprelya-2020-g
7. Калмыков А., Европа подсчитала убытки от коронавируса. Худшие прогнозы сбываются, Би-би-си, 1 мая 2020, https://www.bbc.com/russian/features-52493422
8. Калмыков А., Мировой экономике грозит кризис столетия, предупредил МВФ. Но все оказалось еще хуже, Би-би-си, 13 мая 2020, https://www.bbc.com/russian/news-52642074
9. Коронавирус: в ООН поставили диагноз мировой экономике и назначили лечение, Май 15, 2020, http://khovar.tj/rus/2020/05/koronavirus-v-oon-postavili-diagnoz-mirovoj-ekonomike-i-naznachili-lechenie/
10. МВФ: Пандемия COVID-19 нанесет серьезный урон экономике Кыргызстана; https://rus.azattyk.org/a/30611446.html
11. Петровский П., Коронавирус – не причина, а катализатор экономического кризиса, 18 май 2020, http://russkie.org/articles/koronavirus-ne-prichina-a-katalizator-ekonomicheskogo-krizisa/
12. Чернышевская Ю., Мировая экономика начнет восстановление с 2021 года; 29.04.2020; https://www.rzd-partner.ru/other/news/mirovaya-ekonomika-nachnet-vosstanovlenie-s-2021-goda/
13. Чтобы восстановиться после пандемии COVID-19, мировой экономике понадобится три года; 17.05.2020; https://inshe.tv/economics/2020-05-17/530742/
14. Assessment of the Economic Impact of Restrictive Government Policies (Lockdowns) to Combat Coronavirus; 03.04.2020, http://inecbus.rau.am/rus/11/1226?fbclid=IwAR1ygZ_dY_vVnLDb5w-pUgr59bVdXPouEQEZW6tfx-4M2X_phe8JSmthLa1Q

Давид АХВЕРДЯН
Директор исследовательского центра "Амберд", АГЭУ,
доктор экономических наук, профессор

ТРАЕКТОРИЯ ПАНДЕМИИ

КОРОНАВИРУС И КРИЗИС: ПРИЧИНА ИЛИ ПОВОД?

В статье автор, анализируя кризис COVID-19, обосновывает, что последнее не причина, а повод для кризиса. В частности, по мнению автора, более весомыми причинами кризиса являются беспрецедентный рост мирового долга, глобальный дисбаланс мировой экономики, критическое состояние фондовых рынков и т.д. Что касается Республики Армения, автор отмечает, что критическое состояние, которое сложилось в стране, вынуждает думать исключительно о минимизации убытков, избежании гуманитарной катастрофы, препятствовании распространению коронавируса и сокращении числа жертв, а не использовании кризиса как возможности для развития.

Ключевые слова: *кризис COVID-19, коронавирус, мировая экономика, глобальный дисбаланс, мировой долг*

Davit HAKHVERDYAN
Director of "Amberd" Research Center, ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor

PANDEMIC TRAJECTORY

CORONAVIRUS AND CRISIS: CAUSE OR OCCASION?

In the paper, the author, analyzing the crisis of COVID-19, substantiates that the latter is not a cause, but an occasion for a crisis. In particular, according to the author, more significant causes of the crisis are the unprecedented growth of the global debt, the global imbalance of the global economy, the critical state of stock markets, etc. Returning to the Republic of Armenia, the author mentiones that the critical state created in the country forces one to think exclusively about minimizing losses, avoiding a humanitarian catastrophe, preventing the spread of coronavirus and reducing the number of victims, rather than using the crisis as an opportunity for development.

Key words: *COVID-19 crisis, coronavirus, global economy, global imbalance, global debt*